

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու

մասին

Արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 22- 34.4-Մ2-1)

Հիմնական գործառույթները՝

- 1) Իրականացնում է երկկողմ և բազմակողմ համագործակցության աշխատանքները, միջազգային պայմանագրերի կնքման գործընթացը, բանակցությունների, համաձայնեցումների, նախաստորագրման, ստորագրման, հաստատման կամ վավերացման գործընթացը,
- 2) Իրականացնում է լիազորագրերի, իրավական կարծիքի, ՀՀ կառավարության որոշումների, միջազգային պայմանագրերի կնքման, ստորագրման, հաստատման, վավերացման նպատակահարմարության տեղեկանքների նախապատրաստման աշխատանքները,
- 3) Իրականացնում է Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միության միջև ընդլայնված և համապարփակ համագործակցության համաձայնագրի իրականացման աշխատանքները, ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի աշխատանքները,
- 4) Իրականացնում է ԱՊՀ խորհուրդների որոշումների, համաձայնագրերի, հուշագրերի իրավական այլ փաստաթղթերի նախագծերի շրջանառման, քննարկման, կարծիքի ձևավորման, որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվության ներկայացման աշխատանքները,
- 5) Իրականացնում է օտարերկրյա պետությունների հետ միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը, դրանց նիստերի արդյունքներով հանձնարարականների կատարումը,
- 6) Իրականացնում է միջազգային կազմակերպությունների, միջազգային ֆինանսական, վարկային կազմակերպությունների հետ աշխատանքները,
- 7) Իրականացնում է Նախարարության համանախագահությամբ գործող միջկառավարական հանձնաժողովների աշխատանքները,
- 8) Իրականացնում է Նախարարության պաշտոնատար անձանց գործուղումների գործընթացի բովանդակային մասի, այդ թվում՝ ելույթների, պրեզենտացիաների նախապատրաստումը,
- 9) Իրականացնում է Նախարարության բնագավառի վարկային, դրամաշնորհային և ներդրումային ծրագրերով արտասահմանյան կապալառու ընկերություններին Հայաստանում գործունեության ընթացքում աջակցության ցուցաբերման աշխատանքները:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- Բարձրագույն կրթություն,
- Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,

- Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ

- **Տիրապետում է** ԵՄ ինտեգրման բնագավառում իրականացվող պետական քաղաքականությանը և գործընթացներին, ԵՄ կառույցներին, նրանց գործառույթներին և աշխատակարգերին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությանը.

- **Օտար լեզվի իմացություն** (տիրապետման աստիճանը)՝ ռուսերեն (ազատ), անգլերեն կամ գերմաներեն կամ ֆրանսերեն (ազատ)

- Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ մինչև նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 10.10.2019թ.

- Աշխատավարձի չափը՝ 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ:

- Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, էլ. փոստ՝ n.kirakosyan@mta.gov.am

- Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,

- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում է անձամբ: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: